

Բայց ի՞նչ տեսնաս՝ որչափ քաշէր և ուժ
տայր:

Ուզողը ապշած նորամէ ետ չէր փնայր.
Չարմացած կեցաւ՝ զիտեց և փորձեց,
Վերջապէս ուղտին մօրուքն համրեց . . .
Հասկըցաւ թէ նա իր կարծածէն չէր,
Խոշոր մարմնոյն չափ բընաւ խելք չունէր.

Ուստի ազատ համարձակ՝
Չբանին ծայրն ուսն առաւ,
Իբրեւ մի մեծ յաղթանակ
Չահեղ ուղտը քարշ տարաւ:

Երբ որ այսպէս խրրոխտ կերպով

Նա անտառը կը մըտնար,

Կրնճահայրը դէմն ելլալով

Խիստ կարմացած կը պոռար.

«Փօ՛ այդ բըլուրն յուստի՞ գըտար,

Ե՛յդ մէկ տարուան է պաշար

— «Ի՞նչ հասակին մի՛ խաբուիր,

Եղուէսն ասաց ծաղրաբար,

Ե՛յդ է խեղճին ծախտին զիր՝

Չի հաւէ մ' իսկ է տըկար

Թէպէտ մարմնոյն չըկայ չափ,

Բայց վերնատունն է պարապ

Ե. հա այսպէս ամեն տեսակ՝

Երկայն հասակ՝ լեցուն քըսակ,

Եթէ չունին խելք ու հանճար

Մեր ուղտէն ետ չեն մընար

ԱԲԱԲԵԼ ԱՆՏՕՆԵԱՆ ՆԱԼԳԱՆՏԵԱՆ.

Ի ՍԷՖԵՐԿՈՒԼ՝

ԱԶԳԱՅԻՆ

ՍՈՒՐԲ ՄԻՒՌՈՒՄԻ ՕՐՀՆՈՒԹԵԼՆ ՀԵՆԳԻՍ.

Ի 4 ն Յունիս ամսոյ կատարուեցաւ
Ս. Միւռօնի օրհնութիւնը:

Թէեւ անցեալ 1877 թուականի աշուն-
քում պիտի կատարուէր յիշեալ հան-
դէսը եւ ըստ այնմ պատրաստութիւնքը
կհոգացուէին, այլ սակայն հանրածա-
նօթ վերջին պատերազմը կանխեց եւ
արգելառիթ եղաւ, մի եւ նոյն ժամա-
նակ անհրաժեշտ հարկը՝ ինչպէս նաեւ
ուրիշ նշանաւոր շատ պատճառներ
ստիպեցին սովորական եղած հրաւեր-
ները եւլն համառօտել եւ կատարել Ս.
Միւռօնի օրհնութիւնը, բայց եւ այն-
պէս երեւանէն եւ Ս. Էջմիածնի շրջա-
կաներէն դիմած եւ հաւաքուած մեր
սիրելի եւ բարեպաշտ Հայ եղբարց բազ-
մութիւնը խիստ շատ էր եւ անշուշտ
10000 անձինքէն աւելի կլինէին:

Արդարեւ մեծ ցաւ է ամեն Հայերուն՝
որ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ գլխա-
ւոր եւ փառաւոր արարողութիւններէն
մինը եղող Ս. Միւռօնի օրհնութիւնը
այս անգամ այսպէս կատարուեցաւ,
սակայն չեմք երկբայիր՝ որ ամեն Հայ
կրնայ առաւել կամ նուազ կերպով
ինքնին կշռել ներկայիս բազմատեսակ
եւ խռնն հանգամանքները եւ ըստ
այնմ կսիրէ ներողամիտ լինել:

ՆՈՐԱՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Պալըքէսէրու Հայոց Վիճակին Առաջնորդ Բարեշնորհ Տիմօթէոս Վարդապետ Սափրիչեան ի 25ն Յունիս ամսոյ՝ Վեհ. Հայրապետէն յիշեալ Վիճակին վերայ Եպիսկոպոս ձեռնադրեցաւ ըստ խնդրանաց մերազնեայ Ժողովրդեանն եւ ըստ Վկայութեան Գեր. Տ. Ներսէս Արքեպիսկոպոս Սրբազան Պատրիարքի Հայոց Կ. Պօլսոյ:

Յիշեալ Բարեշնորհ Վարդապետի Եպիսկոպոսական վսեմ աստիճանը շնորհաւորելով, կրարեմաղթեմք յԱստուծոյ տալ նմին նոր ոգի՝ կարողութիւն եւ զօրութիւն խորտէ քանայոյ եւ աշխատելոյ համար ի պայծառութիւն եկեղեցեաց եւ դպրոցաց իւրոյ Վիճակին.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՔ.

Յունիս ամսոյ վերջերում Գեր. Յարութիւն Եպիսկոպոս Յովհաննիսեան ի Կ. Պօլիս եւ Յուլիս ամսոյ սկիզբներում Գեր. Տիմօթէոս Եպիսկոպոս Սափրիչեան ի Պալըքէսէր վերադառնալոյ համար ի Ս. Էջմիածնէ մեկնեցան:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌԱՎԱՐԻՉ

Ս. ԳԵՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ.

Գեր. Գաբրիէլ Ս. Արքեպիսկոպոս Այվազեանց՝ քանի տարիէ հետէ Մայր Աթոռոյ Ս. Գէորգեան ձեմարանի Վե-

րտեսչութեան հետ Վրաստանի եւ Իմէրէթի Վիճակին Հայոց Թեմակալ Առաջնորդութիւնը ստանձնած կվարէր, իսկ յիշեալ նշանաւոր եւ կարեւոր երկու պաշտօնները իմիասին ըստ արժանւոյն յաջողութեամբ կատարելը եթէ չասեմք անկարելի՝ պէտք է խոստովանիլ զի շատ դժուար է՝ ինչպէս որ փորձով պարզուեցաւ, վասն որոյ Վեհ. Հայրապետ Ազգիս անհրաժեշտ համարեցաւ զՆորին Գերապատուութիւն ազատ կացուցանել ձեմարանի վերատեսչութեան պաշտօնէն՝ եւ զԳեր. Անդրէաս Ս. Արքեպիսկոպոս ձեմարանի առժամանակեայ Ընդհանուր Կառավարիչ կարգել, որ եւ Յուլիս ամսոյ 15էն սկսեալ ստանձնեց իւր նոր պաշտօնը, ուստի կշնորհաւորեմք բարեմաղթելով Նորին Գերապատուութեան կարողութիւն եւ յաջողութիւն:

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏ Ի ԲԻՒՐԱԿԱՆ.

Վեհ. եւ Սրբազնագոյն Հայրապետ Ազգիս անձնական երկարատեւ տկարութենէն ստիպեալ ի 17ն Յուլիս ամսոյ օգափոխութեան համար Բիւրախանու ամարանոցը դնաց: